

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի 29.08.2019թ. թիվ 161 նիստի

Օրակարգ.

1. Առկա ասպիրանտ Հայկ Սմբատյանի՝ թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատում:
3. Հասարակայնության հետ կապեր(PR) մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նախապատրաստման աշխատանքներ:
4. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացված գիտական նախագծի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեյի կողմից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ներկայացման մասին:
5. «Հասարակայնության հետ կապեր(PR)» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նախապատրաստման աշխատանքներ և երաշխավորում:

Լսեցին 1. Առկա ասպիրանտ Հայկ Սմբատյանի՝ թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումն հարցը:

Ելույթ ունեցան. Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը, Յու. Մելքումյան:

Որոշեցին 1. Առկա ասպիրանտ Հայկ Սմբատյանի՝ թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սահմանամերձ գյուղերի հայ դեռահասները «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» հասարակությունում» հասարակությունում:

Որոշեցին 2. Առկա ասպիրանտ Հայկ Սմբատյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել ս.գ.թ. դոցենտ Սոցիոլոգիայի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Հարություն Վերմիշյանին: Դիմել ՀՀ ԲՈԿ-ին՝ Հ. Վերմիշյանին «սոցիոլոգիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսական աշխատանքների ղեկավարմանն թույլատվության ստացման նպատակով:

Լսեցին 2. ԵՊՀ 100-ամյակի և Սոցիոլոգիայի ֆակուլտետի 15-ամյակի կապակցությամբ կազմակերպվող ֆակուլտետային միջոցառումների նախապատրաստական աշխատանքների քննարկում:

Ելույթ ունեցան. Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը, Հ. Գևորգյանը:

Որոշեցին. Հաստատել ԵՊՀ 100-ամյակի և Սոցիոլոգիայի ֆակուլտետի 15-ամյակի կապակցությամբ կազմակերպվող ֆակուլտետային միջոցառումների կազմակերպման աշխատանքային գրաֆիկը:

Լսեցին 3: Հասարակայնության հետ կապեր(PR) մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նախապատրաստման աշխատանքներ:

Ելույթ ունեցան. Ա. Մկրտիչյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը, Ն. Մելքոնյանը, Յու. Մելքումյանը:

Որոշեցին: Հասարակայնության հետ կապեր(PR) մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի մշակման նախապատրաստման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով`

- դոցենտ Ն. Մելքոնյան
- դոցենտ Յու. Մելքումյան
- դասախոս Ա. Նիկողոսյան
- ասպիրանտ Ա. Կարապետյան:

Լսեցին 4: Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացված գիտական նախագծի` ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեյի կողմից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ներկայացման մասին:

Ելույթ ունեցան. Ա. Մկրտիչյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը, Ն. Մելքոնյանը, Յու. Մելքումյանը, Ս. Զապավսկայան:

Որոշեցին: ՀՀ կրթության և գիտությանն նախարարության գիտության պետական կոմիտեյի կողմից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ներկայացման համար երաշխավորել «Ազգային ինքնության ձևավորման հիմնախնդիրը ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման արդի գործընթացների համատեքստում» թեմայով նախագիծը, տևողությունը երկու տարի, ղեկավար՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի, պրոֆ սոց. գ.դ., պրոֆ Ս. Ի. Զասլավսկայա:

Լսեցին 5: «Հասարակայնության հետ կապեր(PR)» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի նախապատրաստման աշխատանքներ և երաշխավորում:

Ելույթ ունեցան. Ա. Աթանեսյանը, Ա. Խաչատրյանը, Յու. Մելքունյանը, Ս. Զասլավսկայան, Ա. Մկրտիչյանը:

Որոշեցին: Երաշխավորել «Հասարակայնության հետ կապեր(PR)» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի հայտի պատրաստումը և ներկայացումը:

Նիստի նախագահող՝

Ա. Ե. Մկրտիչյան

Քարտուղար՝

Ա. Վ. Աթանեսյան